

ՀԱՐԿԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼԻ
ՀՈՒՇԱԹԵՐԹ

Ինչ պիտի իմանա հարկային գործակալը	1
ԽՍՀՄ ՖժԿ-ի 1938 թ. ապրիլի 28-ի 221/130 հրահանգ «Շրջանային ֆինանսական բաժինների հարկային գործակալների աշխատանքների մասին»	16
ԽՍՀՄ ԺԿԽ և Համ. Կ(բ)ԿԿԿ վորոշումը «Մենա- տնտես տնտեսութունների հատկանիշներ և այլ պա-	29

336.2

չ

ՅՅՈՒԳՎԱՍԻ Է 1961 թ.

պրոպագանդա և լուր յերկրների, միացե՛ր

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱ-

4634

ԼԻ ՀՈՒՇԱԹԵՐԹ

A I
3590




ՀԽՍՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1938 թ.





ԻՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԸ

ԽՍՀ Միության ԺԿԽ-ի 1938 թ. ապրիլի 26-ի № 562 վորոշումը «Գյուղում հարկային և ապահովագրական վճարումների աշխատանքները բարելավելու մասին» շրջֆինբաժիններին կից սահմանված և հարկային գործակալների պաշտոններ, վորոնց վրա դրված և գյուղական բնակչության հարկային և ապահովագրական վճարումների գանձումը:

Միութենական Կառավորության այդ վորոշումը թելադրված և նրանով, վոր ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կողմից 1937 թվին գյուղում հարկային և ապահովագրական վճարումները շրջֆինբաժինների գյուղական մուտքի-յեւքի դրամարկղների, ու շրջիկ դրամարկղների, գյուղական խնայողական դրամարկղների և ֆինբաժնի տեսուչների միջոցով գյուղական բնակչության կից դրամական վճարումներ ընդունումը չերապահովվում պետական հարկերի և պարտադիր կոպարային ապահովագրության վճարումների ժամանակին և լրիվ գանձումը և գյուղական բնակչության համար դժվարութուններ եր ստեղծում պետության հանգեպ դրամական պարտավորությունները կատարելու:

Դրամական վճարումների գանձման նոր կարգը

հարկային գործակալների միջոցով պահանջում և շրջֆինբաժիններից, բոլոր դեպքերում կարգավորելու գյուղի հարկային և ապահովագրական աշխատանքները:

ԽՍՀ Միության Ժողովրդական կոմիսարների Խորհրդի 1938 թ. ապրիլի 26-ի վորոշման հիման վրա կազմակերպված գյուղի հարկային և ապահովագրական աշխատանքների հաջողությունը կախված և հանրապետական, մարզային, յերկրային, ոկրուգային և շրջանային ֆինանսական մարմինների ղեկավարների ձեռնահասությունից, թե վորքան ճիշտ են կազմակերպելու յուրաքանչյուր հարկային գործակալի աշխատանքը:

Ֆինանսական մարմինները պարտավոր են ամենորյա ոգնություն ցույց տալ հարկային գործակալներին նրանց գործնական աշխատանքներում, հրահանգել և վերահսկել նրանց, ժամանակին մատակարարել նրանց բոլոր անհրաժեշտ հրահանգները, տեղեկանքները և այլ ոժանդակ նյութերը:

Յուրաքանչյուր հարկային գործակալ, տիրապետելով հարկային և ապահովագրական վճարումներին դանձման տեխնիկային, միաժամանակ պարտավոր և անընդհատ բարձրացնել իր քաղաքական մակարդակը, իմանալ գյուղխորհրդի աշխատանքները, մանրադնին ուսումնասիրել գյուղի տնտեսական դրությունը:

Հարկային գործակալների վրա դրված բոլոր պար-

տակահոլությունների որինակելի կատարումը, անհնարին է, յիթե նա չզիտեն ս ԽՂՄ խության հարկային և ապահովագրական որենքները:

Հարկային դործակալը պարտավոր է լավ ուսումնասիրել պետական հարկերի և պարտադիր կոպարային ապահովագրական որենքները, կարողանա պատմել և ձիշտ բացատրել կոլտնտեսականներին և մենատընտեսներին նրանց պարտավորությունները պետության հանդեպ:

Հարկային դործակալը չպետք է թույլ տա, որքենքով չսահմանված հարկերի գանձումներ, պարտավոր է ուշադիր և զգայուն (вѣткo) վերաբերվել աշխատավորության կողմից հարկերի և ապահովագրական վճարումների գծով տրվող բողոքներին:

Հարկային դործակալը պիտք է հավաքի հարկային և ապահովագրական վճարումները սահմանված ժամկետներում, պահի իր գանձած միջոցները, ժամանակին հանձնի պետական բանկի բաժանմունքին, մանրամասն ձևակերպի և պահպանի բոլոր գրամական փաստաթղթերը և ժամանակին ներկայացնի շրջֆինբաժնին գրամական հաշվետվությունները:

Հարկային դործակալների վրա դրվում է պատասխանատու քաղաքական աշխատանք: Վորպեսզի այս դործակալները լրիվ յուրացնեն իրենց վրա դրված բոլոր պարտականությունները, շրջֆինբաժնիները պարտավոր են պարբերաբար անցկացնել սեմինար պարապմունքները, զրույցներ և տեխնիկական խորհրդակցություններ:

Այդ նպատակով ել հրատարակված է այս «Հուշատետր» գրքուկը:

Յուրաքանչյուր հարկային գործակալ պետք է յուրացնի, վոր նա կարող է հաջող աշխատել, անպայմանորեն պահպանելով ԽՍՀՄ իության Ֆինանսական ժողովրդական Կոմիտարիատի կողմից հարկային գործակալներին առաջադրվող բոլոր պահանջները:

Հարկային գործակալները նույնպես պետք է հիշեն, վոր իրենց առորյա աշխատանքում բոլշեվիկյան զգոնությունը, քննադատությունը և ինքնաքննադատությունը կոծանդակի վոչ թե միայն գյուղի հարկային և ապահովագրական հետագա աշխատանքների բարելավման, այլ և շրջֆինբաժնի ամբողջ աշխատանքի կարգավորման:

Հարկային գործակալներն իրենց աշխատանքներում պետք է ներգրավեն գյուղի հասարակայնությունը և կոնտակտ աշխատեն գյուղխորհրդների հետ:

Գ Լ ՈՒ Խ Ի Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Հարկային գործակալների նշանակումը, փոխադրումը և աշխատանքից ազատելը, կատարվում է մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետությունների ֆինանսների ժողովրդական կոմիտեների, մարզային բաժանում չունեցող ավտոնոմ հանրապետությունների ֆինանսների ժողովրդական

կամիսարների, մարզային (յերկրային) ֆինանսական բաժինների կողմից՝ շրջֆինբաժինների վարիչների առաջադրութեամբ:

Հարկային գործակալի պաշտոնում նշանակվում են հանրակրթական պատրաստականութուն և գյուղի հարկային աշխատանքին ծանոթ, քաղաքականապես ստուգված անձինք:

Հարկային գործակալը նշանակվում է մեկ գյուղական խորհրդի սահմաններում բնակչութեանը սպասարկելու համար: Առանձին դեպքերում, յերբ տվյալ գյուղխորհրդի սահմաններում տնտեսութունների թիվն աննշան է, թույլատրվում է հարկային գործակալի նշանակումը յերկու գյուղական խորհուրդների տերիտորիայում յեղած բնակչութեան սպասարկելու համար:

Այն գյուղխորհրդներում, վորոնք ընդգրկում են 1000 տնտեսութունից ավելի, յուրաքանչյուր հարկային գործակալին կից սահմանվում է հարկային գործակալի ոգնականի պաշտոն:

Հարկային գործակալներն աշխատում են գյուղխորհրդի կողմից տրամադրված շենքերում:

Այդ շենքերը պետք է համապատասխանորեն կահավորված լինեն, վորպեսզի հնարավոր լինի կատարելու հարկային և ազահովազրական վճարումների մուծումները և պահել գանձված դրամական գումարները և փաստաթղթերը:

Հարկային գործակալներն աշխատում են շրջֆինբաժինների ղեկավարութեամբ, հաշվում են շրջ-

Ֆինբաժնի հաստիքներում և աշխատավարձը ստանում են շրջֆինբաժնի նախահաշվից:

Հարկային գործակալների և նրանց ոգնականների աշխատավարձ սահմանվում է, յեղնելով տնտեսությունների թվից և սպասարկվող բնակելի կետերի հեռավորություններից:

ԽՍՀՄ իռության Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը սահմանել է աշխատավարձի դրույքները յեղնելով գյուղխորհուրդների հետևյալ խմբավորումներից:

ա. (Առաջին խումբ), վորոնք սպասարկում են վոչ ավելի 2 բնակելի կետից) .

Տնտեսությունների թիվը մինչև 600 150 ոուբլի.

անտեսությունների թիվը 600-ից մինչև 800 . . . 180 ոուբլի.

անտեսությունների թիվը 800-ից մինչև 1000. 225 ոուբլի.

անտեսությունների թիվը 1000-ից բարձր՝ 250 ոուբլի.

բ. (Յերրորդ խումբ), վորոնք սպասարկում են վերկու բնակելի կետից ավելի) .

Տնտեսությունների թիվը մինչև 400 150 ոուբլի.

անտեսությունների թիվը 400-ից մինչև 600 . . . 180 ոուբլի.

անտեսությունների թիվը 600-ից մինչև 800 . . . 225 ոուբլի.

անտեսությունների թիվը 800-ից բարձր՝ 250 . . ոուբլի.

գ. (Յերրորդ խումբ) վորոնք սպասարկում են հատկապես հեռավոր բնակելի կետերը) .

Տնտեսությունների թիվը մինչև 300 150 ոուբլի.

անտեսությունների թիվը 300-ից մինչև 500 . . . 180 ոուբլի.

անտեսությունների թիվը 500-ից մինչև 700 . . . 225 ոուբլի.

անտեսությունների թիվը 700-ից բարձր՝ 250 ոուբլի:

Այն գյուղխորհուրդներում, վորոնք ընդգրկում են, 1000 անտեսությունից ավելի, յուրաքանչյուր հարկա-

յին գործակալին կից սահմանված ե հարկային գործակալի ոգնականի պաշտոն, աշխատավարձի հետեվ-
յալ դրույքով, այն դեպքում, յերբ հարկային գործա-
կալը սպասարկում ե 1000-ից մինչև 1600 տնտեսու-
թյուն, 150 ռուբլի ե 1600 տնտեսությունից բարձր՝
180 ռուբլի:

Գ Լ ՈՒ Խ 2-րդ

ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆՑ
Ո՞՞ՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկային գործակալները՝

ա) Կատարում են վճարողների ե պետական հարկերի որեկտների հաշվառում:

բ) Հաշվարկում են պետական հարկերը, լրացնում ե հանձնում են վճարման ծանուցագրերը:

գ) Հավաքում են պետական հարկերի ու պարտազիր կոպարային ապահովագրության վճարումները ե տալիս են վճարողներին սահմանված ձեվի անդորագրեր: Դրամային վճարումների ընդունման անդորագրերը անպայման ստորագրում ե անձամբ հարկային գործակալը:

դ) Կատարում են ընդունված դրամական վճարումների հաշվառում ե վոչ պակաս յերկու անգամ հնգորյակում ե անձամբ փոխադրում (հանձնում են)

պետական բանկի դրամարկղներին:

յ) Վարում են պետական հարկերի ու պարտադիր կոպարային ապահովագրության վճարողների անձնական հաշիվները:

զ) Ներկայացնում են շրջֆինբաժնին հաշվետվություններ՝ վճարողների հաշվառման, պետական հարկերով հարկվող օբեկտների, հաշվարկված հարկերի չափի, հավաքած դրամական միջոցների ու այդ պետական բանկի դրամարկղը հանձնելու մասին:

ե) Պահում են դրամական միջոցները (մինչև Պետքանկ հանձնելը) նույնպես բոլոր դրամական փաստաթղթերը և վճարողների անձնական հաշիվները:

Դրամական վճարումների ընդունման և հանձման, հարկային գործակալների փաստաթղթերի ու հաշվետվությունների կազմելու կարգը սահմանված է ԽՍՀ-Միության 1938 թ. ապրիլի 28-ի № 221/130 «շրջանային ֆինանսական բաժինների հարկային գործակալների աշխատանքների մասին» հրահանգով, վորը հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ կից տնտեսական խորհրդակցության կողմից 1938 թ. ապրիլի 29 ին:

Հարկային ու ապահովագրական վճարումների ընդունումը անձամբ դրված և հարկային գործակալների վրա՝ ՌԽՖՍՀ—ում, Ուկրաինայի ԽՍՀ և Բելոսոսիայի ԽՍՀ—ում 1938 թ. հունիսի 1-ից և մնացած միութենական հանրապետություններում՝ վոչ ուշ հուլիսի 1-ից:

Այդ ժամկետին շրջֆինրաժինները պետք է հանձնեն հարկային գործակալներին ապառքավորներէ ցուցակներն ըստ առանձին գյուղխորհրդներէ,

ա) ըստ գյուղատնտեսական հարկի,

բ) ըստ գյուղական վայրերի կուլտ-կենցաղային և բնակարանային շինարարութեան կարիքներէ համար գանձվող տուրքի:

գ) ըստ պարտադիր կուպրային ապահովագրութեան:

Այդ ցուցակներում պետք է նշվեն՝

ա) գյուղխորհրդի և բնակելի կետերի անվանումը,

բ) վճարողի ազգանունը, անունը և հայրանունը,

գ) ապառքի չափը:

1938 թվի վճարողների հաշվառումը և գյուղհարկի հաշվարկումը կատարում են յենթաշրջանային հարկային տեսուչները, անպահման այդ աշխատանքներին մասնակից դարձնելու հարկային գործակալներին:

1938 թվի գյուղհարկի վճարողների հաշվառումը և հարկի հաշվարկման ամբողջ աշխատանքները պետք է անցկացվի այն հաշվով, վորպեսզի հարկային գործակալները հարկային տեսուչների ղեկավարութեամբ հունիս—հուլիս ամսների ընթացքում լրիվ յուրացնեն գյուղհարկի յենթակա վճարողների հաշվառման, գյուղհարկի հաշվարկման, յեկամուտների վորոշման և նույնպես վճարման ծանուցագրերի լրացման և հանձնման կարգի տեխնիկան:

Հարկային գործակալների ակտիվ մասնակցութ-
յունն այդ կարեւոր աշխատանքներին կոգնի նրանց
հետագայում վճարողների հաշվառումը և հարկերի
անցկացնել ինքնուրուն կերպով:

1938 թ. ոգոստոսի մեկին շրջֆինբաժինները պար-
տաճոր են հանձնելու հարկային գործակալներին գյուղ-
հարկի վճարողների ցուցակները 1938 թ. գյուղհարկի
վճարողների անձնական հաշիվները լրացնելու և վտ-
ցելու համար:

Այդ նույն ժամկետին պետք է հարկային գոր-
ծակալներին հանձնվեն պարտադիր կոպարալին ապա-
հովադրության ցուցակները, ապահովագրության վճա-
րողների անձնական հաշիվները լրացնելու և վարելու
համար:

Պարտադիր կոպարային ապահովագրություն վճա-
րողների հաշվառումը և ապահովագրական վճարումների
չափերի սահմանումը, ու ապահովագրական վճարում-
ների ծանուցագրերի լրացումը կատարում են պետ-
ապահովագրության տեսուչները:

Պետապահովագրության վճարումների ծանուցա-
գրերի հանձնումը կարելի է հանձնարարել նաև հար-
կային գործակալներին:

Այն վայրում, մորտեղ կա հարկային գործակալ-
ների ոգնական, նա աշխատում է հարկային գործա-
կալների անմիջական ղեկավարությամբ և կատարում
է հետեւյալ պարտականությունները՝

ա) կազմում է հանձնում է վճարման ծանուցա-

պրերը.

բ) վարում է վճարողներին անձնական հաշիվ-
ները.

գ) կանչում է վճարողներին, հարկերը մուծելու
համար.

դ) կազմում է ապառքավորների ցուցակները և
հարկային գործակալների Ֆինբաժնին ներկայացվող
հաշիվետույթյունները

յե) կատարում է հարկային գործակալների այլ
հանձնարարությունները:

Հարկային գործակալներին ոգնականներին թույլա-
տրվում է դրամական վճարումներ ընդունել բացառիկ
գեպքերում, այն ել՝ հարկային գործակալի միջնոր-
դությամբ, շրջֆինբաժնի վարիչի պաշտոնական թույլ-
տվությամբ:

Հարկային գործակալների կողմից գանձված
պետական հարկերը և ապահովագրական միջոցները
կանոնավոր և լրիվ հանձնվում են, կամ փոստի միջո-
ցով փոխադրում են պետքանկի դրամարկղը:

Գանձված դումարները պետքանկի դրամարկղ սե-
շացումով հանձնելու կամ փոխադրելու, ինչպես և
բնակչության վճարումներից փոխարինաբար դումար-
ներ վերցնելու համար, հարկային գործակալները
կյենթարկվին խստագույն պատասխանատվության:

Հարկային գործակալներն անձամբ պատասխա-
նատու չեն հավաքված դրամական միջոցների, դրա-
մական փաստաթղթերի և վճարողների անձնական
հաշիվների ամբողջության համար:

Գ Լ ՈՒ Խ 3-րդ

ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հարկային գործակալները պետք է տաննն դյուզ-
քնակչության մեջ մասսայական ազիտ—բացատրական
ամենորյա աշխատանք:

Այդ աշխատանքը պետք է հետապնդի հետեվյալ
նպատակը՝ ամեն կերպ բարձրացնել հարկային զիսցիպ-
լինան պետական հարկերը վճարողներին մեջ, պիտու-
թյան հանդեպ իրենց հարկային պարտականություն-
ների կատարումը և նույնպես պարտադիր կոպարային
ապահովագրության վճարումներին կատարումը:

Հարկային գործակալներն իրենց աշխատանքի
ընթացքում պետք է ստեղծեն հասարակական ակտիվ
այնպիսի կոլանտեսականներին և մենատնտեսներին,
վորոնք աչքի են ընկնում պետության առաջ իրենց
պարտավորություններին կատարման բարձր գիտակ-
ցությամբ:

Ժողովներ և զրույցներ կազմակերպելու միջոցով,
հարկային գործակալներն ակտիվին ծանոթացնում են
հարկային և ապահովագրական որենքների և ԽՍՀՄ
Ֆինստողկոմատի հրահանգներին և ակտիվիստներին
մասնակից են դարձնում հարկեր վճարողներին լրիվ

հաշվառման և որեկտների հայտնաբերման գործին:

Հարկային գործակալներն իրենց աշխատանքներում մենատնտես տնտեսություններից զրամական վճարումները գանձելու խնդրում, պարտավոր են ղեկավարվել ԽՍՀՄ Խուժյան ԺԿԽ և Համ. Կ(բ)Կ. Կ. Կ. 1938 թ. ապրիլի 19 ի վորոշումով «Մենատնտես տնտեսությունների վերաբերմամբ հարկերի և այլ պարտավորությունների մասին» և խիստ հսկել այն բանին, վոր մենատնտեսները ճիշտ կատարեն պետական պարտավորությունները հարկերի ուղղությամբ:

Հարկային գործակալները պարտավոր են պարպերաբար ինֆորմացիաներ տալ գյուղխորհրդի նախագահներին հարկերի և ապահովագրական վճարումների գանձման աշխատանքի ընթացքի մասին, հարկեր վճարողների հաշվառման և նրանց պետական հարկերով հարկման արդյունքների մասին և նույնպես ոգնեն գյուղխորհրդներին ծանոթացնելու բնակչությանը հարկային և ապահովագրական որենքների հետ:

Հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ-ին կլից Ցնախորհրդի
կողմից 1938 թ. ապրիլի 29-ին

ՀՐԱՅԱՆԳ

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱ-
ԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

1938 ապրիլի 28-ը

№ 221/130

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՐ-
ԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ**

(Հրատարակված է ԽՍՀ Միության ԺԿԽՀ 1938 թ.
ապրիլի 26-ի № 562 վորոշման հիման վրա «Գյուղում
հարկային և ազահովազրական վճարումները դանձման
աշխատանքները բարեկալիքու մասին»):

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկային գործակալների աշխատանքները կատարում և շրջանային ֆինանսական բաժինների ղեկավարութեամբ:

Հարկային գործակալների վրա դրվում և հետևյալ պարտականությունները՝

1. Պետական հարկեր վճարողների և հարկման որչեպաների հաշվառումը:

2. Պետական հարկերի հաշվարկումը և վճարման ծանուցագրերի հանձնումը վճարողներին:


3. Հարկերի և պարտադիր կոպարային ապահովագրական վճարումների դանձումը, գանձված գումարների հաշվառումը և փոխադրումը պետական բանկ:

4. Հաշվետվությունների ուղարկումը ֆինբաժիններին ըստ սահմանված ձևերի:

Հարկային և ապահովագրական վճարումների գանձումը պետք և կատարվի գյուղխորհրդների կողմից այդ նպատակով առանձնացված շինքում կամ կուտակահատված վարչություն գրասենյակում: Արգելվում և վճարումները ընդունել տնտեսությունները (բնակարանները) շրջագայելու միջոցով:

2. ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՅԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Հարկային գործակալները գյուղական բնակչության ընդունում են հետևյալ վճարումները՝



ա) գյուղատնտեսական հարկը.

բ) կուլտ-կենցաղային և բնակարանային շինարարութեան կարիքների համար գանձվող տուրքը.

գ) պարտադիր կուպրային ապահովագրութեան վճարումները:

Հարկային և կուպրային ապահովագրութեան վճարումները ընդունելու համար, հարկային գործակալները տալիս են վճարողներին ԽՍՀՄ Ֆինոնդկոմատի կողմից սահմանված ձևի անդորագրեր:

Արգելվում է դրամներն ընդունել առանց անդորագրերի կամ անդորագրերի փոխարեն այլ ձևի անդորագրերի կամ ստորագրութեանների տալը:

7. Յուրաքանչյուր անդորագիր գուրս և գրվում յերկու որինակից (իսկական անդորագիրը և պատճեն) անպայման քիմիական մատիտով, պատճեհահան թղթով (կապիրովկայով) լրիվ և պարզ նշելով բոլոր այն տեղեկութեանները, վորոնք ցույց են արված անդորագրում: Արգելվում է անդորագրերը լրացնել առանց պատճեհահան թղթի: Անդորագրերը ստորագրում են հարկային գործակալը և նույնի վրա անպայման պետք է ստորագրի վճարողը (պատճեհահան թղթի միջոցով) և գրվի հարկային գործակալի շտամպը:

8. Արգելվում է կատարել անդորագրերի և պատճենների վրա ուղղումներ և ջնջումներ: Սխալ դուրս գրված անդորագրերը համարվում են փչացած և նրա վրա գիծ է քաշվում, այնպիսի դեպքերում հարկային

գործակալի կողմից անդորագրի և նրա պատճենի վրա նշվում և «փշացած և»:

9. Անդորագրերը տրվում են առանձին անդորագրքույկներից ըստ առանձին հարկային և պարտադիր կոպարային ապահովագրության վճարումների:

Անդորագրային գրքույկների շապիկների վրա պետք և գրել «Գյուղհարկի համար», «պարտադիր կոպարային ապահովագրության համար»:

10. Հարկային և պարտադիր կոպարային ապահովագրության վճարումները հարկային գործակալներն ընդունում են, միայն վճարողների կողմից սահմանված ձևի վճարման ծանուցագրեր ներկայացնելուց հետո:

Վճարումների ընդունումը կատարվում և հետևյալ կարգով՝ վճարվող գումարից առաջին հերթին մարվում և անցյալ տարիների ապառքները և հետո այդ ապառքների վրա հաշվող տույժը: Դրանից հետո մարվում և ընթացիկ տարվա վճարումից գոյացած ապառքը և այդ ապառքի վրա հաշվող տույժը, իսկ մնացած գումարը հաշվվում և ընթացիկ տարվա հերթական վճարումների գիմաց: Հարկային և ապահովագրական վճարումները սահմանված ժամկետներին չմուծելու դեպքում, տույժը հաշվվում և յուրաքանչյուր անցած որվա համար վճարման ծանուցագրերում նշված չափով:

Անդորագրերի պատճենները և նույնպես փշացած անդորագրերը և նրանց պատճենները թողնվում են անդորագրքույկի մեջ: Արգելվում և այդպիսիները կտրել անդորագրքույկներից

12. Հարկային և ապահովագրական վճարումներին անդորրագրքույկները շրջֆինրաժինների կողմից աըբ-վում են հարկային գործակալներին, գրավոր պահանջները ներկայացնելուց հետո (ձև 4): Այդ պահանջագրում հարկային գործակալը նշում և մնացորդը և պահանջվող անդորրագրքույկների քանակը:

Թույլատվութունն անդորրագրքույկները բաց թողնելու մասին տալիս և շրջֆինրաժնի վարիչը:

Ոգտագործված անդորրագրքույկները պահվում են հարկային գործակալների մոտ մինչև վերստուգում կատարելու մոմենտը:

13. Գյուղական բնակչութունից շրջֆինրաժիններին կից գրամարկղների մոտ մինչև վերստուգում կատարելու մոմենտը:

Գյուղական բնակչութունից շրջֆինրաժիններին կից գրամարկղների կողմից գրամական վճարները ընդունելու դեպքում, վերջիններն ուղարկում են համապատասխան հարկային գործակալներին հատուկ տեղեկութուններ ընդունված գումարների մասին:

14. Հարկային գործակալները պարտավոր են վոչ պակաս 2 անգամ վեցորյակում անձամբ հանձնել Պետական բանկի շրջանային բաժանմունքին, կամ փոխադրել փոստի միջոցով ընդունված հարկային և ապահովագրական վճարումները:

Իրամական գումարները Պետբանկի բաժանմունքին հանձնելու, կամ փոստի միջոցով փոխադրելու ժա-

մանակ, հարկային գործակալները պետք է կազմեն № 2 ձեվի ուղեկցող տեղեկագրեր յերեք որինակից (պատճեահանով) առանձին հարկերի համար և առանձին պարտադիր կոպարային ապահովագրության համար:

Հարկային վճարումների ուղեկցող տեղեկագրի 1-ին սենյակում հարկային գործակալը նշում է անցած տրերում ընդունված վճարումների տեսակները: Յուրաքանչյուր ուղեկցող տեղեկագրի 2-րդ սյունյակում հարկային գործակալը գրանցում է ըստ առանձին վճարումների մուտքի յեղած գումարների ընդհանուր գումարը: Ուղեկցող տեղեկագրի վերջում բառերով գրում է փոստի միջոցով պետական բանկի բաժանմունքին փոխադրման յենթակա ընդհանուր գումարը:

Հարկային գործակալների կողմից դրամական գումարները անմիջականորեն պետքանկի բաժանմունքներին հանձնելու ժամանակ, ուղեկցող տեղեկագրի յերրորդ որինակը պետքանկը նշումներ կատարելով գումարի ընդունման մասին վերադարձնում է հարկային գործակալին:

16. Պետական բանկի բաժանմունքները փոստի միջոցով դրամական փոխադրումներ ստանալու գեպքում ուղեկցող տեղեկագրերի յերկրորդ որինակներն ուղարկում են շրջֆինբաժնին:

3 ՓԱՍՏԱԹՂԹԵՐ (դոկումենտացիա)

Հարկային գործակալները պարտավոր են՝

17. վարել վճարողների անձնական հաշիվներն ըստ ձև № 1-ի:

18. Դրամական միջոցները պետքանկի բաժանմունքին հանձնելու կամ փոխադրելու ժամանակ կազմել ուղեկցող աեղեկագիրը ըստ ձև № 2-ի:

19. Վարել դրամական մուծումների որագրերը ըստ ձև № 3-ի:

20. Պահել դրամարկղում մուտք յեղած դրամական միջոցները մինչև պետքանկի բաժանմունքին հանձնելը, անդորագրքույկները, փոստի անդորագրերը և այլ փաստաթղթեր պետական բանկի բաժանմունքին հանձնելված գումարների վերաբերյալ և նույնպես վճարողների անձնական հաշիվները:

Հարկային գործակալներին անձնական հաշիվների գրքերի, ուղեկցող տեղեկագրերի, դրամական մուտքերի որագրերի, բլանկների և անդորագրքույկները մատակարարումը կատարում է շրջֆինբաժինը:

4. ՇՐՋՖԻՆԲԱԺԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկային գործակալները ներկայացնում են շրջֆինբաժնին հետևյալ հաշվետվությունները.

21. Հաշվետվություն վճարողների հաշվառման, հարկման որչեկտների և հաշվարկված հարկերի արդյունքների մասին:

22. Պարբերական հաշվետվություն վճարումների գանձումների մասին:

21 և 22-րդ կետերում նշված հաշվետվութիւնները ներկայացվում ե ըստ ԽՍՀՄ Ֆինանսական տնտեսական կոմիտեի սահմանված ժամկետների և ձևերի:

Հարկային գործակալների աշխատանքների հրահանգումը և վերահսկողութիւնը դրվում ե շրջֆինբաժնի վրա:

ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիտեի
Ա. ԶՎԵՐԵՎ

Բաց քաղցի
անդառազբաւի

հաս

Ձեզ Ա 4

Կցումն ԽՍՀՄ Ժ-ԿԽ-ի 1938 թ. ապ-
րիլի 28-ի Ա 221/130 հրահանգի.

... 193 թ.
Շրջփինհամի վարիչ

... Շրջփինհամին
... հարկային գործակալից
(ազգանուն, հայրանուն, և անուն)

Պ Ա Հ Ա Ն Ջ Ա Գ Ի Ի

Հարկային և ապահովագրական վճարումները ընդունման
անդորագրբույժներ ստանալու համար:

Խնդրում եմ բաց թողնել 193 թ. ...
ամսվա համար ... » հատ անդորագրբույժներ
(քանակը կրկնել բառերով)

Մնացորդ « ... » զբբույժ.
« ... » 193 թ.

Հարկային գործակալ ...
(Ստորագրութուն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Բաց թողած անդորագրբույժները մասին

Քանակը	Սերիաներ և № №		Ստորագրութուն ստանալու մասին
	Սերիա	№-ից մինչև №-ը	

Շրջան
Գյուղխորհուրդ

ՀԱՇՎԻՉ Թ

Ձև № 1.
Կցում ԽԱՂՄ ՖՃԿ-ի 1938 թ.
Ապրիլի 28-ի № 231/130 հրահանգի

(վճարողի ազգանունը, անունը և հայրանունը)

(վճարողի կասեցրիան)

Կարգավորված գրանցումը (անդրադարձի ճշմարտացիությունը)

Մարտի 1938 թ.

Մարտի 28-ի 1938 թ.

Կարգավորված գրանցումը (անդրադարձի ճշմարտացիությունը)

Տարի

Կարգավորված գրանցումը (անդրադարձի ճշմարտացիությունը)

Կարգավորված գրանցումը (անդրադարձի ճշմարտացիությունը)

Կարգավորված գրանցումը (անդրադարձի ճշմարտացիությունը)

Կարգավորված գրանցումը (անդրադարձի ճշմարտացիությունը)

Կարգավորված գրանցումը (անդրադարձի ճշմարտացիությունը)

Կարգավորված գրանցումը (անդրադարձի ճշմարտացիությունը)

Գյուղխորհուրդ

Տարածքի վրա
Մարտի 28-ի 1938 թ.
Մարտի 28-ի 1938 թ.
Մարտի 28-ի 1938 թ.

հարկաբեկ-
ի տեղի

մուտքի վճար-
վելու

մուտքի վճար-
վելու

մուտքի վճար-
վելու

մուտքի վճար-
վելու

հարկաբեկ-
ի տեղի

մուտքի վճար-
վելու

մուտքի վճար-
վելու

մուտքի վճար-
վելու

մուտքի վճար-
վելու

. Շրջֆինբոսնի
 Գյուլիստրհրդի
 Հարկային գործակալ

Ձեզ Ձ 2
 Կցումն ԽՍՀՄ ՖժԿ-ի
 1938 թ. ապրիլի 28
 № 221 130 հրահանգի.

. Պետական բանկի բաժանմունքին
 ՈՒՂԵԿՑՈՂ, ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա . . .

. վճարումների գանձված գումարները պետական բան-
 կի բաժանմունքին հանձնված կամ փոստի միջոցով փոխադրված
 193 թ. « » համար:

(ամիս և թիվ)

Վճարումների անվանումը	Գումարը

Ընդամենը

(կրկնել ուրբիներին գումարը բառերով, իսկ կոպ. թվերով).
 Հարկային գործակալ
 (ստորագրութուն)

« » 193 թ.

Պետբանկի նշանակումները — այս ուղեկցող անդեկազրով
 Ընդունված է ուրբի,
 Ստորագրութուն « » 193 թ.

Կ. Տ.

Երկրի մասնագետները 1938 թ. ապրիլի 2

ՈՐԱԳԻՐ

Մուծումների և դրամական գումարների հանձնման,

հաս.

(վճարումների անվանումը)

Ընդամենն մուտք և յե-

ղի

Մուտք յեղած ընդ-
հանուր գումարների
բաշխումը ըստ վճար-
ողների առանձին
կատեգորիաների -
Կոլտնտես-
սական տնտես.

Հանձնված և կամ փոխադրված
գետական բանկ

Մուտք յեղած գու-

Ներքին

Մարտի 1-ից

Տարի

Ներքին

Գումար

Մ-Ձ

Վճարողների
կատեգորիաների
մասին տեղեկացու-
թյուններ

Մուտքի և հանձնված
գումարների մասին

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ
ՀԱՐԿԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միութեան Ժողովրդական Կոմիսարներէ
խորհրդի յե՛վ Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմի-
սեյի վորոճումը

Բազմաթիւ փաստերի հիման վրա ԽՍՀՄ Ժող-
կոմխորհը և Համ Կ(բ)Կ Կենտկոմը հաստատում են,
վոր հանրապետութեան ներքին, յերկրամասերում և
մարզերում կուսակցական և խորհրդային որգանների
կողմից խախտվում են կառավարութեան և կուսակցա-
կան քաղաքականութեան ու վորոշումները մենա-
տնտեսների վերաբերմամբ: Խորհրդային որենքներով
պետական պարտավորութեաններ են սահմանված ան-
հատական տնտեսութեանների համար՝ հարկերի, հա-
ցամթերումների և մասմթերումների գծով: Սակայն, վո-
խանակ ապահովելու որենքով սահմանված պետական
պարտավորութեանների կատարումն անհատական տըն-
տեսութեանների կողմից, տեղական կուսակցական և
և խորհրդային որգանները թույլ են տալիս այնպիսի
դրութեան, վորի ժամանակ մենատնտեսները փաստո-
րեն խուսափում են պետական պարտավորութեանների
կատարումից: Մի շարք մարզերում և յերկրամասերում
մենատնտեսները բոլորովին չեն յենթարկվում մասմթե-

քուճների, իսկ մասմթերման շրջանային առաջադրանք-
ների կատարումը դրվում են կոլտնտեսութժյունների
վրա:

Այդպիսով, Խորհրդային և կուսակցական կազմա-
կերպութժյունները փաստորեն անհատական տնտեսու-
թժյուններին դնում են կոլտնտեսութժյունների համե-
մատութժամբ արտոնյալ դրութժան մեջ, վորն արմա-
տապես հակասում և գոյութժյուն ունեցող որենքներին:

Անհատական տնտեսութժյուններում ձիերը, վո-
րոնք չեն հարկադրվում մենատնտեսների կողմից վոր-
պես կանոն ոգտագործվում են վոչ թե իրենց տնտե-
սութժյան մեջ գյուղատնտեսական աշխատանքներ կա-
տարելու համար, այլ վորպես սպեկուլացիայի և վաս-
տակի միջոց:

Կոլտնտեսութժյունների վարչութժյունները շրջա-
նային խորհրդային և կուսակցական որդանների թող-
տրվութժամբ, խախտելով գյուղատնտեսական արտելի
կանոնադրութժյունը, ամենուրեք դիմում են մենատըն-
տեսների վարձմանը՝ կոլտնտեսութժյուններում աշխա-
տելու համար, վճարելով նրանց ավելի բարձր վարձա-
տրութժյուն, քան հասնում և կոլտնտեսականներին ըստ
աշխորերի, վորը չի կարող չխախտել կարգապահութժ-
յունը կոլտնտեսութժյուններում:

Դեպի անհատական տնտեսութժյուններն այդպիսի
վոչ ձիշտ վերաբերմունքի հետևանքով, ուղղակի վլաս
և հասցվում կոլտնտեսութժյունների մեջ անհատական

տնտեսությունների հետագա ներգրավման գործին: Այս բոլորը վկայում է հանրապետությունների, յերկրամասերի և մարզերի խորհրդային ու կուսակցական որդանների կողմից մենատնտեսների վերաբերմամբ խոշոր սխալների առկայության մասին:

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համգ(բ)Կ կենտկոմը վարժում են.

1. Պարտավորեցնել ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին, յերկրկոմներին և մարզկոմներին, հանրապետությունների ժողկոմխորհներին, մարզգործկոմներին և յերկրգործկոմներին՝ վերջ դնել մենատնտեսի վերաբերմամբ թողալություն հակապետական ու հակակոլտնտեսային պրակտիկային և խստորեն հետեւել հարկերի, հացամթերման, մսամթերման և այլ գրծով բոլոր պետական պարտավորությունների ստույգ կատարմանը և անհատական տնտեսությունների կողմից:

2. 1938 թ. ապրիլի 25-ից վերականգնել պետական հարկը անհատական տնտեսությունների ձեռքի նկատմամբ:

3. Պարտավորեցնել հանրապետությունների, յերկրամասերի և մարզերի ու խորհրդային կուսակցական կազմակերպություններին՝ այսուհետև չթույլատրել մենատնտեսների խուսափումն ամեն տեսակ տեղական պարհակներ կրելուց (ճանապարհային աշխատանքներ, անտառաւայութի փոխազրում, դպրոցների, հիվանդա-

նոցների սպասարկում և այլն), դրանով իսկ չթուլա-
տրելով մենանտեսների վորևե արտոնություն կողմնատե-
սականների համեմատությամբ:

ԽՍՀՄ Ժողովրդական
կամիտեների կարմրի
նախագահ՝ Վ. ՄՈՒՈՏՈՎ:

ՀամԿ(բ)Կ Կենտրոնական
Կոմիտեի քարտուղար՝
Ի. ՍՏԱԼԻՆ:

19 ապրիլի 1938 թ.
Մոսկվա, Կրեմլ



8959



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038187

0643

338

A $\frac{I}{3590}$

Проб. 1940Г.

Проб.